ԴԻԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տվյալ հոդվածում գնահատվել է ՀՀ մրցունակությունը նոր մոդելի միջոցով, որը բաղկացած է հինգ հենասյուներից: Կատարվել է նաև ռեգրեսիոն վերլուծություն Ազգային տնտեսության մրցունակության առաջարկվող համաթվի ու ՀՆԱ աճի տեմպի միջև և պարզ է դարձել, որ ԱՏՄ-ն զգալի ազդեցություն ունի ՀՆԱ աճի տեմպի վրա և կարող է կանխորոշել տնտեսական աճի փոփոխությունները:

Հիմնաբառեր. *ազգային տնտեսության մրցունակություն, մոդել, տնտեսական արդյունավետություն, տեխնոլոգիական զարգացման մակարդակ, մարդկային ռեսուրսներ, կառավարման և արտադրության արդյունավետություն, ռեգրեսիոն վերլուծություն*

JEL: E50, E59, E61

Ազգային տնտեսության մրցունակության գնահատման առաջարկվող մոդելը կառուցվել է 5 հենասյուների վրա. տնտեսական արդյունավետություն, տեխնոլոգիական զարգացման մակարդակ, մարդկային ռեսուրսներ, կառավարման արդյունավետություն և արտադրության արդյունավետություն: Ամեն մի հենասյուն ունի իր ենթաբաժինները, որը թույլ է տալիս բացահայտել յուրաքանչյուր գործոնի բովանդակությունը:

Տնտեսական զարգացման մակարդակ: 2017 թ. Հայաստանում գրանցվել է 7.5% տնտեսական աճ, ինչը 2008 թվականից ի վեր գրանցված ամենաբարձր ցուցանիշն է: 2017 թ. երկրի ՀՆԱ ծավալը ընթացիկ գներով կազմել է 5 տրլն 580 մլրդ դրամ: Համաձայն ԱՎԾ տվյալների՝ ՀՆԱ աճին ամենաշատը նպաստել է առևտրի և ծառայությունների ոլորտը: 7.5% աճի 5.3 տոկոսային կետն ապահովել է այս ոլորտը: Արդյունաբերությունը նպաստել է 1.8 տոկո-

սային կետով, շինարարությունը՝ 0.2: Իսկ ահա գյուղատնտեսությունը բացասական ազդեցություն է թողել. հավելաճին նպաստման չափը -0.6 տոկոսային կետ է[1]:

Տնտեսության բարելավման նպատակով ՀՀ Կառավարությունը տարիներ շարունակ վերցրել և շարունակում է վերցնել վարկեր միջազգային կազմակերպություններից և երկրներից՝ պետական պարտքը մոտեցնելով մտահոգիչ սահմանագծի: 2017 թ. տվյալներով ՀՀ պետական պարտքը կազմել է 6.7 մլրդ դոլար, 2018 թ. դեկտեմբերի դրությամբ՝ մոտ 6.9 մլրդ ԱՄՆ դոլար: Կառավարության պարտքը 2017 թ. արդյունքներով կազմել է ՀՆԱ 58.9%-ը, նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 2.2%-ով, ինչը պայմանավորված է պետական պարտքի առաջանցիկ աճով: ՀՀ պետական բյուջե/ՀՆԱ հարաբերակցությունը վտանգում է տնտեսության զարգացումը: Այս իրավիճակից միակ ելքը ՀՆԱ աճն է[2]:

Աճող և արագ զարգացող միջազգային առևտուրը պայմանավորում է տնտեսական միասնացման գործընթացի արագացումը, որը և ապահովում է երկրների մրցունակ ապրանքների արտահանումը:

2017 թ. ՀՀ ապրանքաշրջանառությունը կազմել է 6.426 մլրդ դոլար, որը 2016 թ. համեմատությամբ աճել է 26.9%-ով: Ապրանքների արտահանումը կազմել է 2.243 մլրդ դոլար(25.2%), ներմուծումը՝ 4.183 մլրդ դոլար (27.8%): ՀՀ արտահանումը դեռևս հեռու է երկարատև տնտեսական աճ ապահովելուց: Առևտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 1.95 մլրդ դոլար, ինչը և ցույց է տալիս արտաքին առևտրի անկատարությունը: Այս ամենը շտկելու համար անհրաժեշտ է ավելացնել արտահանումը և կրճատել ներմուծումը:

Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ 2017 թ. ՀՀ-ում, 2016 թ. համեմատությամբ, օտարերկրյա ներդրումները կրճատվել են 88,3 մլն դոլարով (26.1%-ով)[3]: Հայաստանի սպառողական շուկայում 2017 թվականին գնաճը կազմել է 2.6%:

Աղյուսակ 1

Տնտեսական զարգացման մակարդակի *ենթաբաժինները*

Մակրոտնտեսական ցուցանիշներ	*2003*	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*
ՀՆԱ աճի տեմպ	14.0	10.5	13.9	13.2	13.8	6.9	-14.1	2.2	4.7	7.2	3.3	3.6	3.2	0.2
Դեֆլյատոր	4.6	6.3	3.2	4.6	4.1	5.9	2.6	7.8	4.3	1.2	3.4	2.3	1.2	0.5
Գործազրկության մակարդակ	10.1	9.6	8.2	7.5	7.0	6.3	7.0	19.0	18.4	17.3	16.2	17.6	18.5	18.0
Խնայողությունների ծավալ	101.9	30.0	49.0	43.0	32.0	40.0	-38.0	-8.1	19.5	-18.0	38.0	-5.2	42.0	41.0
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճ տեմպ	14.1	10.4	13.7	13.1	13.7	6.7	-14.4	1.8	4.3	6.9	3.3	3.9	3.5	0.6

[1] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք. https://www.armstat.am/file/article/sv_12_17a_3.pdf, 01.11.2018:

[2] Տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարություն տարեկան հաշվետվություններ. http://minfin.am/hy/page/tarekan_hashvetvutyunner/1 2017՝ 6–7 էջ, 01.11.2018:

[3] Տե՛ս World Bank Group, https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.CD.WD?end=2016&locations=AM&start=1992&view=chart&year=2006&year_low_desc=true, 01.11.2018:

Վերջնական սպառման ծախսեր	7.6	9.1	9.9	9.0	13.7	6.9	-4.0	3.9	2.6	7.7	1.6	0.7	6.2	0.5
Համախառն կուտակում	30.7	17.5	26.9	32.2	19.7	12.6	-30.9	0.5	-5.2	0.5	-9.1	-3.0	-1.2	-8.7
Պետական կառավարման արդյունա-վետություն														
Պետական եկամուտ /ՀՆԱ %	18.0	15.8	16.7	16.6	18.7	22.0	22.0	22.6	23.3	23.7	23.5	23.7	23.2	23.1
Պետական ծախսեր /ՀՆԱ %	19.3	17.5	18.6	18.1	20.2	22.7	29.6	27.6	26.1	25.2	25.1	25.6	28.0	28.5
Պետական բյու-ջեի պակասուրդ, հավելուրդ (ՀՆԱ %)	-1.3	-1.7	-1.9	-1.5	-1.5	-0.7	-7.6	-5.0	-2.8	-1.5	-1.6	-1.9	-4.8	-5.5
Քաղաքական կայունություն	52.0	41.0	43.0	38.0	45.0	44.0	53.0	50.0	44.0	51.0	50.0	36.0	37.0	25.0
Պետական կա-ռավարման արդ-յունավետություն	52.0	54.0	50.0	44.0	46.0	49.0	49.0	54.0	57.0	46.0	49.0	49.0	50.0	50.0
Օրենքների պահպանում	45.0	39.0	40.0	35.0	39.0	45.0	40.0	37.0	42.0	43.0	45.0	41.0	41.0	50.0
Կաշառակերու-թյան մակարդակ	35.0	30.0	49.0	30.0	27.0	29.0	34.0	36.0	36.0	36.0	35.0	35.0	36.0	33.0
Միջազգային առևտուր														
Արտահանման աճի տեմպ	35.7	5.4	34.5	1.1	16.9	-8.2	-32.8	46.6	28.1	3.7	7.1	4.6	-3.8	20.6
Ներմուծման աճի տեմպ	29.5	5.5	33.4	21.6	49.1	35.4	-24.9	12.8	10.5	2.6	2.9	0.8	-26.7	1.6
Ընթացիկ հաշիվ (Վճարային հաշ-վեկշիռ/ՀՆԱ %)	-17.1	-15.8	-2.6	-7.8	-10.8	-14.2	-16.5	-13.6	-10.4	-10	-7.3	-7.6	-2.7	-2.7
Կապիտալ հաշիվ (Վճարային հաշ-վեկշիռ/ՀՆԱ %)	0.6	0.7	1.7	1.5	1.2	1	1	1.1	0.9	1	0.8	0.6	0.6	0.3
Ֆինանսական հաշիվ (Վճարա-յին հաշվե-կշիռ/ՀՆԱ %)	-15.5	-11.3	-11.2	-11.1	-11.2	-13.1	-16.7	-14.2	-9.9	-7.1	-9.2	-7.3	-3.6	-4.4
Ֆինանսական ցուցանիշներ														
1. Գնաճ	4.7	6.9	0.6	2.8	4.4	8.9	3.4	8.1	7.6	2.5	5.7	2.9	3.7	-1.2
4. ՕՈՒՆ (զուտ ներհոսք)	10.9	102.4	18.21	59.58	43.13	41.37	-19.4	30.39	23.4	-24.04	-30.24	16.47	-55.83	89.88
Բանկային համա-կարգից դուրս կանխիկ դրամ	3.4	7.6	46.9	46.5	54.5	-3.3	-10.4	7.8	14.8	10	0.01	-10.1	-10.3	13
Ավանդներ դրամով	17.1	12.1	73.9	62.5	79.2	-6.008	-22.8	42.3	14.05	30.6	1.09	1.1	9.5	32.6
Ավանդներ արտարժույթով	26.9	40.4	0.7	1.49	-9.1	30.2	114	6.9	117.4	30.3	14.2	22.9	16.4	11.6

Տեխնոլոգիական զարգացման մակարդակը: Տրանսպորտը երկրի տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկն է: ՀՀ Կառավարության առանցքային խնդիրն է կիրառել և ընդունել տնտեսական ու տեխնիկական ժամանակակից կանոնակարգեր՝ ապահովելով միջազգային չափանիշներին ու լավագույն փորձին համահունչ ենթակառուցվածքներ: Երկարաժամկետ հեռանկարում ճանապարհային ոլորտում նախատեսվում է կարևոր նորամուծություն՝ ինտելեկտուալ տրանսպորտային համակարգի (ԻՏՀ)[4] ներդրում:

Աղյուսակ 2

Տեխնոլոգիական զարգացման մակարդակի *ենթաբաժինները*

Ենթակառուցվածքներ	*2003*	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*
Երթուղային տրանսպորտ	21.4	2.8	35.2	9.5	4	15.3	80	64	5.1	150	8.7	12.5	4.7	2.2
Ավտոմոբիլային տրանսպորտ	0.6	24.3	52	35.7	26.3	4.1	20	26.6	28.9	18.3	-10.1	3.2	4.5	18.7
Օդային տրանսպորտ	9.4	10	4	7.6	114.2	-19.3	1.03	30.8	29.6	62	3.7	12.5	8.4	1.5
Էլեկտրա-տրանսպորտ	10	0.13	-0.81	-0.8	3.5	3.3	33.1	35.2	8.6	12	3.5	3.4	2.4	3.3
Մայրուղային խողովակաշար	-1.5	0.2	0	2.7	-5.6	-0.4	50	-4.5	0.7	-2.06	-3.13	0.02	0.6	0.01
Տեղեկատվական տեխնոլոգիաներ														
Հեռուստակայանների քանակ	20.8	1.5	1	-0.9	2.5	-0.1	0	0	0	0	17.7	3.3	0	0
Բջջային հեռախոսի բաժանորդներ	59.1	78	185.2	74.5	56.1	27.9	11.9	5.8	12.1	-23.3	0.7	3.3	0.14	-0.8
Համացանցից օգտվողների թիվ	105.4	-3.3	26.5	-10.04	-5.8	314.4	49.5	81.6	75.6	399	4.8	2.3	5.5	9.6
Կապի ծառայություններից հասույթ	14.8	22.2	24.24	48.2	18.2	10.7	0.12	4.2	-0.05	2.3	3.9	-1.6	-6.1	-10.6
Տեխնոլոգիաների կառավարում														
Նորագույն տեխնոլոգիաների ներդրավում	0.8	2.4	2.7	2.5	1.6	-1.4	-0.1	5.7	2.4	2.3	1.2	1.4	1.4	1.5
Ձեռնարկությունների նոր տեխնոլոգիաների յուրացում	1.2	4.5	3.1	3.4	1.4	1	1.5	1.4	4.5	3.2	3.4	1.2	2.3	3.4
Համալսարան – արդյունաբերություն հետազոտական համագործակցություն	0.3	0.5	1.2	1.4	1.5	1.5	3.4	3.4	1.2	1.2	1.2	1.7	2	2.1

[4] Ինտելեկտուալ տրանսպորտային համակարգ (ԻՏՀ). ամբողջական միասնական տեխնիկական և տեխնոլոգիական համալիր է, որը միավորում է ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման ենթահամակարգերն ու դրանց զարգացման մեխանիզմները, ինչպես նաև երթևեկության մասնակիցներին և տրանսպորտային գործընթացի հավանական սուբյեկտներին անհրաժեշտ տեղեկատվական ծառայությունների մատուցումը:

2016 թ. բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած կապի ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալը ընթացիկ գներով կազմել է 151.844 մլն դրամ, որը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, համադրելի գներով, նվազել է 10.6%-ով է[5]:

SS ոլորտը հսկայական արտահանման ներուժ ունի և, որպես այդպիսին, կարող է մեծ ներդրում ունենալ Հայաստանի տնտեսության աճի ու զարգացման գործում: Այսօր հայաստանյան SS ընկերությունները հնարավորություն ունեն առաջարկելու միջազգային բարձր չափորոշիչներին համապատասխանող արտադրանք ու ծառայություններ: Սակայն դեռևս կան որոշակի խնդիրներ արտաքին շուկաներ դուրս գալու և SS ոլորտի մասնագետներ պատրաստելու հարցում: Այս տեսանկյունից կարևոր է Կառավարության կողմից խրախուսման քաղաքականության և շարունակական աջակցման ծրագրերի իրականացումը: 2017 թվականին ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտում ու համացանցային ծառայությունների պրովայդերների մոտ գոյացած եկամուտների մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում հասել է 6%-ի (10.6 միլիարդ ԱՄՆ դոլար): 2010–2017 թթ. ՏՀՏ ոլորտի տարեկան աճի տեմպը կազմել է 26,3%: Ոլորտի մասնաբաժինը արտահանումների ընդհանուր ծավալում 2010 թ. գրանցված 8%-ից աճել է՝ 2017-ին հասնելով մինչև 16%-ի, ինչը վկայում է Հայաստանի տնտեսության համար ծրագրավորման ոլորտի աճող նշանակության մասին, որը պայմանավորված է արտահանող ձեռնարկությունների զարգացմամբ ու ընդլայնմամբ[6]:

Մարդկային ռեսուրսներ: ՀՀ կրթական ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայման: 2018 թ. առաջին եռամսյակում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմել է 61.355 դրամ, իսկ նվազագույն աշխատավարձը՝ 55.000 դրամ՝ անփոփոխ մնալով 2015 թ. հուլիսից: Հայաստանում զբաղվածների շրջանում աղքատության մակարդակը 24.1% է: Այն ընտանիքներում, որտեղ ոչ ոք չի աշխատում, աղքատության մակարդակը 35.2% է: Սա բավականին բարձր ցուցանիշ է և փաստում է, որ Հայաստանում դեռևս շատ աշխատանք պետք է տարվի արժանապատիվ աշխատավարձի մակարդակ ապահովելու համար[7]: 2017 թ. երկրում գործազրկության մակարդակը կազմել է շուրջ 17.8% (218 900 մարդ): Նվազագույն ամսական աշխատավարձի մասին ՀՀ օրենքի հիմնավորման մեջ նշվում է, որ նվազագույն աշխատավարձը աշխատողին տրվող հատուցման նվազագույն թույլատրելի սահմանն է, և այն դեռևս չի ապահովում աշխատողի նվազագույն կենսապայմանները[8]:

Կառավարման արդյունավետություն: Նորամուծական գործունեությունը վճռական ազդեցություն ունի արդի ժամանակաշրջանի գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում: 2017 թ. ստեղծվել է ՀՀ գիտատեխնիկական հիմնադրամ, որի նպատակն է ձևավորել համապատասխան միջավայր ՀՀ տեխնոլոգիական նորարարության և գիտության զարգացման համար: Հիմ-

---

[5] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք – 2017, Եր., 2017, էջ 347:

[6] Տե՛ս ՏՀՏ ոլորտը Հայաստանում. զեկույց, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Եր., 2017, էջ 41:

[7] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք–2017, Եր., 2017, էջ 88-89:

[8] Տե՛ս «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքը. http://parliament.am /drafts.php?sel=showdraft&DraftID=5723&Reading=0

նադրամը պետք է գիտության վրա հիմնված ստարտափները զարգացնի ու կյանքի կոչի՝ գիտատարողունակների համար նորարական էկոհամարկարգ ստեղծելով, նպաստելով գիտության առևտրայնացմանը տեղային և համաշխարհային գիտական, ինժեներական ու գործարար հանրության ներուժի օգտագործմամբ[9]:

Աղյուսակ 3

Մարդկային ռեսուրսների *ենթաբաժինները*

Կրթություն	*2003*	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*
Նախադպրոցական հիմնարկներ հաճախող երեխաների թիվ	3.2	-1.9	5.9	-1.4	5.2	6.4	0.3	8.2	9	9.3	0.8	0.5	0.1	5.7
Հանրակրթական դպրոցների աշակերտների թիվ	-4.1	-2.7	-2.1	-2.6	-7.3	-4.8	-5.3	-5.6	4.2	-4.6	-2.2	1.3	0.1	1.1
Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների թիվ	5.8	-2	1.1	0.1	1	2.1	-5.7	-2.2	0.3	2.8	-5.4	-14.7	-4.6	-0.6
Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թիվ	8.5	9.5	14.9	8.6	6	4.2	1.9	-0.9	-1.9	-4.3	-1.4	-6.7	2.6	-2.2
Աշխատավարձ և նպաստներ														
Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձ (անվանական)	27.3	24.9	19.8	19.7	19.2	17.8	9.9	6.9	5.3	4.7	4.1	8.2	8.2	1.6
Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձ (իրական)	21.6	16.7	19.1	16.3	14.1	8	6.2	-1.2	-2.2	2	-1.6	5.1	4.4	3
Կենսաթոշակի իրական ամսական միջին չափ	33.2	18.6	10.9	11.3	16.8	67.7	14.1	10.5	-0.2	9.7	-1.9	23	12.9	-0.1
Միջին ամսական անվանական աշխատավարձ՝ ըստ տնային տնտեսությունների (ոչ պետական)	7.1	9.8	26.7	4.2	21.6	16.6	4.7	10	3.3		18.3	3.2	6.9	3.8
Միջին ամսական անվանական աշխատավարձ՝ ըստ տնային տնտեսությունների (պետական)	40	16.6	26.1	13.2	18.3	16.9	2.4	5.8	3.3	36.5	5.5	8.9	9.5	-1.8

Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ 2016 թ. գրանցվել է 3,573 նոր բիզնես, որը նախորդ տարվա համեմատությամբ 3.5%-ով ավելի է (2015 թ.՝ 3.556): Նոր բիզնեսի ստեղծման համար խոչընդոտ է ՀՀ հարկային դրույքաչափերի բարձր լինելը:

Արտադրության արդյունավետություն: 2017 թ. գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքի ծավալը, 2016-ի տվյալների համեմատությամբ, աճ է արձանագրել[10]:

2016 թ. համեմատությամբ արդյունաբերությունն արձանագրել է 12.6% աճ, որին առավելապես նպաստել է մշակող արդյունաբերության 15.7% աճը: 2017 թ., իրացման համեմատությամբ, ավելացել է նաև արդյունաբերական արտադրանքի արտահանումը:

Նորարարության ոլորտի զարգացման և նորարարական տեխնոլոգիաների ստեղծման ճանապարհին կան բազմաթիվ հիմնախնդիրներ: Միևնույն ժամանակ, երկրի տնտեսությունը դեպի այդ ճանապարհը մղելու մեջ շահագրգռված կողմերի գործողությունները պետք է բխեն երկրում գիտատեխնո-

[9] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարարության կայք. http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/24/Artur_Alaverdyan.pdf էջ 1(7), 01.11.2018:

[10] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք. https://www.armstat.am/file/article/sv_12_17a_122.pdf, 01.11.2018:

լոգիական և նորարարական գործունեության վիճակից և հիմնվեն օրենսդրական, կարգավորող և ծրագրային փաստաթղթերով սահմանված տվյալ ոլորտների զարգացման թիրախային նպատակների ու խնդիրների վրա: Գիտատեխնիկական և նորարարական զարգացման բնագավառների ֆինանսավորումը 2005–2015 թթ. չի գերազանցել ՀՆԱ 0.25%-ը, ինչը, մյուս երկրների համեմատությամբ, ցածր վարկանիշ է (ԱՄՆ՝ 2.79%, Ճապոնիա՝ 3.28%, Իռլանդիա՝ 1.51%, ՌԴ՝ 1.13%)[11]:

Աղյուսակ 4

Կառավարման արդյունավետության *ենթաբաժինները*

Ձեռնարկատիրական պատասխանատվություն	*2003*	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*
Նոր բիզնեսի ստեղծում	2.1	2.4	2.4	2.4	3.9	3.3	2.5	2.5	2.6	3.1	3.1	3.2	3.5	3.5
Աշխատողների համար վճարվող հարկեր և տուրքեր	16.3	16.4	16.7	16.2	16.2	16.1	15.8	15.9	16	16.01	16.2	16.3	16.3	16.2
Ձեռնարկատիրական գործունեություն														
Տեղական արտադրողների թիվ	2	1.2	2.4	1.7	1.7	-0.9	8.1	30	-6.7	-12.6	0	12	21	-37
Տեղական արտադրողների որակ	0.9	0.9	1.2	1.4	1.6	-0.9	-3.5	-15	1.1	-5.8	-4.3	-5.8	4.3	33
Մրցակցային առավելության բնույթ	1.2	2.4	1.7	1.7	31.6	4.8	38.4	7.4	-10	-3.6	1.2	0	14	-6.1
Արտադրական գործընթացների կատարելագործվածություն	2.3	4.5	12	11.1	12.1	13.5	12.3	13	3.4	-9.5	1.08	6.5	11	13
Իրավասությունները լիազորելու պատրաստակամություն	1.9	-0.9	-3.5	-15	1.1	-1.6	-2.4	11.7	4.4	6.4	7.8	0	0.9	1.9
Միջազգային բաշխման նկատմամբ վերահսկողություն	-2.4	11.7	4.4	6.4	7.8	7.3	2.6	-7.2	3.9	13.2	-11.7	9.4	-19.2	-13
Նորամուծություններ														
Նորամուծությունների ունակություն	1.3	1.2	1.2	1.4	1.6	1.7	1.9	1.1	1.2	1.2	1	2	1.1	1.7
Գիտահետազոտական ինստիտուտների որակ	2.3	2		1.2	1.5	1.2	1.4	1.2	1.5	1.3	1.4	1.2	2.1	3
Հետազոտությունների և զարգացման (R&D) նպատակով ընկերությունների ծախսեր	2.1	3.4	2.1	0.1	0.2	0.1	0.2	1	0.9	0.3	0.4	0.5	1.2	1.4
Գիտնականների և ինժեներների առկայություն	1	2.1	1.2	2.3	2.4	2	1.2	4.2	1	1.2	1.4	1.6	1.4	1.2
Պատենտների քանակ	1.2	2	1	1	1	2.1	3	2	2.1	2.2	0.2	1	2.1	2.4

2017 թվականին մեր երկրում իրականացվել է 415,87 մլրդ ՀՀ դրամի շինարարություն: Նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատությամբ ցուցանիշն աճել է 2.2%-ով: Բյուջեի միջոցներով կատարվել է

[11] Տե՛ս World Bank Group, http://wdi.worldbank.org/table/5.13, 01.11.2018:

շինարարության համախառն ծավալի 9.3%-ը: Միջազգային վարկերի հաշվին իրականացվել է շինարարության ընդհանուր ծավալի 17.8%-ը[12]:

2017 թ. ՀՆԱ 51.9%-ը կազմել է «Առևտուր և ծառայություններ» ենթաբաժինը, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 10.5%-ով[13]:

Աղյուսակ 5

Արտադրության արդյունավետության *ենթաբաժինները*

Գյուղատնտեսություն	*2003*	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*
Բուսաբուծություն	0.8	24.1	1.7	23.6	19.6	-5.5	-14.5	13.2	18.6	10.9	10.8	4.02	-7.5	-11.6
Անասնապահություն	-20.6	21.5	-6.3	-2.9	2.5	8.8	-7.6	19	34.8	-1.2	6.4	11.8	2.06	-0.8
Արդյունաբերություն														
Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	11.9	10.5	-4.6	6.2	3.3	-0.2	10.7	24.3	12.4	14.9	8	-7.6	46.9	8.6
Մշակող արդյունաբերություն	25.3	19.2	-0.6	9.9	2	0.6	-8.9	14.7	17.6	5.9	7.6	5.8	-4.1	3.7
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	1.3	9.9	10.7	-2.2	7.7	8	-13.8	10.3	23.4	11.3	3.4	0.3	3.2	3.3
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	-12.8	-24.2	-17	-17.6	-4	7.3	-6.5	6.7	4.2	8.4	8.2	5.9	10.1	8.3
Նորարարական տեխնոլոգիաներ														
Բարձր տեխնոլոգիաների ներդրումներ	1.4	1.2	0.69	1.08	0.87	1.4	2.1	1.8	2.5	2.6	2.8	2.7	5.2	5.9
Շինարարություն														
Շինարարության ծավալ	41	15	41	38	20	3.1	38.4	2.5	8.9	2.6	7.7	0.2	1.2	12.5
Առևտուր և ծառայություններ														
Մանրածախ առևտրի շրջանառություն	4.1	5.9	7.5	10.5	10	4.4	0.1	0.3	2	2.4	0.8	-0.4	-12.8	-2.6
Մեծածախ առևտրի շրջանառություն	-4	-7	19.3	20.4	3.1	15.2	-11.5	16.8	5.5	10	4.4	0.1	0.3	2
Ավտոմեքենաների արտադրություն	10.1	19	18.5	39.6	39.4	11.3	-49.3	15.8	7.1	11.2	-11.8	3.9	-9.8	22.5
Ծառայություններ	10.4	23	15.5	23.9	21.8	13.8	0.9	3.4	6.1	10.6	4.7	9.6	1.6	7.2

[12] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք. https://www.armstat.am/file/article/sv_12_17a_123.pdf, 01.11.2018:

[13] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք. https://www.armstat.am/file/article/sv_01_18a_112.pdf, 01.11.2018:

Ներկայացված աղյուսակներում օգտագործվել են Համաշխարհային բանկի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, Մենեջմենթի զարգացման ազգային հիմնադրամի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և այլ միջազգային կառույցների կողմից հրապարակված ՀՀ տնտեսությանը վերաբերող ցուցանիշները:

Ազգային մրցունակության համադրելի ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$ԱՏՄ = W_1 \sum_{j=1}^{n_1} m_{1j} ՏԱ_j + W_2 \sum_{j=1}^{n_2} m_{2j} ՏՏ_j + W_3 \sum_{j=1}^{n_3} m_{3j} ՄՌ_j +$$

$$W_4 \sum_{j=1}^{n_4} m_{4j} ԿԱ_j + W_5 \sum_{j=1}^{n_5} m_{5j} ԱԱ_j$$

որտեղ՝ ԱՏՄ-ն տվյալ երկրի ազգային տնտեսության մրցունակության ցուցանիշն է,

W_i-ն՝ i-երորդ ցուցանիշի գնահատականը (i=1,2,3,4,5),

m_{ij}-ն՝ j-երորդ ենթացուցանիշի գնահատականը (j=1,2,3…n_j),

ՏԱ-ն՝ տնտեսական արդյունավետության j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը,

ՏԽ-ն՝ տեխնոլոգիայի զարգացածության j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը,

ՄՌ-ն՝ մարդկային ռեսուրսների j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը,

ԿԱ-ն՝ կառավարման արդյունավետության j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը,

ԱԱ-ն՝ արտադրության արդյունավետության j-երորդ ենթացուցանիշի ստանդարտացված հանրագումարը:

2003–2016 թթ. «Ազգային տնտեսության մրցունակություն» համաթիվը ներկայացված է հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 6

Ազգային տնտեսության մրցունակության համաթիվը 2003-2016 թթ.

Տարի	*Հաշվարկված դիրք*
ԱՏՄ 2003	8.1
ԱՏՄ 2004	1.2
ԱՏՄ 2005	3.3
ԱՏՄ 2006	13
ԱՏՄ 2007	6.6
ԱՏՄ 2008	7.4
ԱՏՄ 2009	2.2
ԱՏՄ 2010	1.8
ԱՏՄ 2011	4.1
ԱՏՄ 2012	3.9
ԱՏՄ 2013	0.8
ԱՏՄ 2014	0.3
ԱՏՄ 2015	0.7
ԱՏՄ 2016	0.8

Ինչպես հայտնի է, որքան բարձր է մրցունակության ցուցանիշը, այնքան բարձր է բնակչության կենսամակարդակը, հետևաբար՝ բարձր է լինում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն: Այդ իսկ պատճառով հետազոտվել է ԱՏՄ-ի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև ռեգրեսիոն կապը:

Աղյուսակ 7

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

Dependent Variable: GDP				
Method: Least Squares				
Date: 05/22/18 Time: 22:33				
Sample: 2003 2016				
Included observations: 14				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	1.70086	0.64148	2.643904	0.0018
ATM	1.066198	0.502264	2.122783	0.0003
R-squared	0.473001	Mean dependent var		5.828571
Adjusted R-squared	0.412418	S.D. dependent var		7.537846
S.E. of regression	6.689525	Akaike info criterion		6.770526
Sum squared resid	536.9969	Schwarz criterion		6.86182
Log likelihood	-45.39368	Hannan-Quinn criter.		6.762075
F-statistic	45.06208	Durbin-Watson stat		1.968239
Prob (F-statistic)	0.000261			

Սույն ռեգրեսիայի միջոցով փորձել ենք բացահայտել ԱՏՄ համաթվի և ՀՆԱ աճի տեմպի փոխառնչությունը: Ինչպես վկայում են վերլուծության արդյունքները, ԱՏՄ-ն ունի զգալի ազդեցություն: ՀՆԱ աճի տեմպի ԱՏՄ միավոր փոփոխությունը հանգեցնում է ՀՆԱ աճի տեմպի մեկ տոկոս փոփոխությանը: Դրա մասին են վկայում t վիճակագրության աղյուսակային կրիտիկականներից մեծ արժեքները, ինչպես նաև նշանակալիության փոքր աստիճանը: Դետերմինացիայի գործակիցն այստեղ 0.47 է, որը ևս, կարծում ենք, այս դեպքում զգալի է:

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքի հիման վրա կարելի է եզրակացնել, որ առաջարկված մոդելը կարող է օգտագործվել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կանխատեսելու նպատակով, հետևաբար նաև՝ տնտեսական աճի կանխատեսումներում: Արդյունքներից երևում է, որ 2008 թ. ի վեր ԱՏՄ ցուցանիշը նվազման հակում ունի: Դա վկայում է այն մասին, որ ՀՀ-ն կորցնում է իր մրցակցային դիրքը համաշխարհային շուկայում:

ՀՀ-ում պետք է վարել նպատակային և հասցեական քաղաքականություն՝ միտված պետական և մասնավոր հատվածների ջանքերի համախմբմամբ ազգային տնտեսության մրցունակության աստիճանի բարձրացմանը: Վերոնշյալ առաջարկության հիմնավորումն այն է, որ տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացումն անհնար է առանց պետության ակտիվ միջամտության: Ներկայումս չկա մի երկիր, որտեղ պետությունը չմիջամտի տնտեսության զարգացմանը և՛ շուկայական, և՛ սոցիալական հարաբերությունների ոլորտներում: Տնտեսության մրցունակության շարունակական աճը պետք է ապահովվի պետության մշտական վերահսկողության և համապատասխան մրցակցային քաղաքականության իրականացման միջոցով՝ նպաստելով շուկաներում մրցակցության տարածմանը, բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորմանը, մենաշնորհների կանխմանը, բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար հավասար մրցակցային պայմանների ապահովմանը: ՀՀ տնտեսության մրցունակության աստիճանի բարձրացման համար կարևոր նախադրյալ է ներդրումների ծավալների ավելացումը: Քանի որ ներքին ներդրումների աղբյուրները սահմանափակ են, ուստի շեշտը պետք է դնել օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա: Ներդրումները հնարավոր ռիսկերից ապահովագրելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել

միջազգային չափանիշներին համապատասխան ապահովագրական համակարգ, ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտը դարձնել կանխատեսելի և կայուն, ավելացնել հարկային և մաքսային արտոնությունները, ներդրումներն ուղղել տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարությունների և նորամուծությունների, ինչպես նաև արտահանման ներուժ ունեցող ոլորտների ֆինանսավորմանը, ինչի արդյունքում կաճեն երկրի տնտեսական զարգացման հնարավորությունները:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք – 2017, Եր., 2017:
2. ՀՀ ազգային վիճակագրական տարեգիրք. https://www.armstat.am/file/article/sv_12_17a_ 3.pdf, 01.11.2018:
3. ՀՀ ֆինանսների նախարարություն տարեկան հաշվետվություններ. http://minfin.am/hy/page/tarekan_hashvetvutyunner/1 2017՝ 6-7 էջ, 01.11.2018:
4. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք. http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5723&Reading=0:
5. ՀՀ սփյուռքի նախարարության կայք. http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/24/Artur_Alaverdyan.pdf էջ 1(7), 01.11.2018:
6. ՏՀՏ ոլորտը Հայաստանում. զեկույց, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Եր., 2017:
7. World Bank Group, https://data.worldbank.org/indicator /BX.KLT.DINV.CD.WD?end=2016&locations=AM&start=1992&view=chart&year=2006&year_low_desc=true, 01.11.2018.
8. World Bank Group, http://wdi.worldbank.org/table/5.13, 01.11.2018.

ДИАНА ГЕВОРГЯН
Аспирант кафедры макроэконамики АГЭУ

Анализ и оценка конкурентоспособности экономики РА.– В этой статье оценивается конкурентоспособность Армении с помощью новой модели, состоящей из пяти категорий. Был также проведен регрессионный анализ между индексом конкурентоспособности национальной экономики и темпами роста ВВП, и стало ясно, что КНЭ оказывает значительное влияние на темпы роста ВВП и может прогнозировать экономический рост.

Ключевые слова: *конкурентоспособность национальной экономики, модель, экономическая эффективность, уровень технологического развития, человеческие ресурсы, эффективность управления и производства, регрессионный анализ.*
JEL: E50, E59, E61

DIANA GEVORGYAN
Post-graduate at the Chair of Macroeconomics at ASUE

The Analizsis and Assessment of the Competitiveness of the RA Economy.– This article assesses Armenia's competitiveness through a new model consisting of five categories. A regression analysis has also been carried out between the National Economy Competitiveness Index and GDP growth rate, and it has become clear that the NCI has a significant impact on GDP growth rates and can predict economic growth.

Key words: *national economy's competitiveness, model, economic efficiency, level of technological development, human resources, management and productivity efficiency regression analysis.*
JEL: E50, E59, E61